# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 262-Ա

## ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի,24-րդ կետով,38-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով,հիմք ընդունելով Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<Թումանյան համայնքի 2022թ. բյուջեն հաստատելու մասին>> թիվ 10 -Ն որոշումը,Թումանյան համայնքի ավագանու 2022թ. հունվարի 18-ի <<ՀՀ Լոռու մարզի Թումանյան համայնքի կամավոր խնդիրները,կամավոր խնդիրներին ուղղված սեփական լիազորությունները և դրանց լուծման իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 19-Ա որոշումը,Թումանյան համայնքի ղեկավարի 2022թ. օգոստոսի 17-ի <<Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծելու համար հանձնաժողով կազմելու մասին>>թիվ 234-Ա որոշումը և Թումանյան համայնքում սոցիալական աջակցության վերաբերյալ կամավոր խնդիրները լուծող հանձնաժողովի եզրակացությունը՝

Որոշում եմ.

Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 /Թումանյան համայնքի նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն ՝համաձայն հավելվածի:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 16
ք.Թումանյան

Հավելված
Թումանյան համայնքի ղեկավարի
2022 թվականի սեպտեմբերի 16-ի
N 262-Ա որոշման

# ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՈՐԱԾԻՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԾՆՈՂՆԵՐԻՆ ՄԻՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

1.Ըստ ստացված դիմումների՝ Թումանյան համայնքի բյուջեի սոցիալական օգնություն խմբի այլ նպաստներ բյուջեից /հոդված 4729 / Թումանյան համայնքի ներքոհիշյալ նորածին երեխաների ծնողներին տրամադրել միանվագ դրամական օգնություն.

1) Սարգսյան Միեր Մադաթի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
2) Պետրոսյան Էդգար Մարտունի - ք. Թումանյան - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
3) Ղազարյան Արարատ Արշալույսի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
4) Հովակիմյան Սոնա Մարտունի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
5) Վարդանանյան Կարինե Պավլեի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
6) Էվոյան Վաչե Սոսի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
7) Էվոյան Անի Արթուրի գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
8) Շեկոյան Հրայր Հրաչյայի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
9) Եգանյան Բագրատ Ռոբերտի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
10) Արզումանյան Գուրգեն Արամի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
11) Քարամյան Արկադի Մանվելի - գ. Դսեղ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
12) Սահակյան Արկադի Հենրիկի - գ. Լորուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
13) Նասիբյան Արարատ Բաղդասարի - գ. Լորուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
14) Զարինյան Աշոտ Լորիկի - գ. Լորուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
15) Խաչիկյան Գնուն Հայկի - գ. Լորուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
16) Գրիգորյան Լիանա Ոսկանի - գ. Մարց - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
17) Սարգսյան Ջիվան Մովսեսի - գ. Շամուտ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
18) Մելքումյան Ելենա Պավելի – գ. Քարինջ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ,
19) Մելքումյան Կորյուն Մերուժանի – գ. Քարինջ - 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 263-Ա

## ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35 -րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի թիվ 2387-Ն որոշման 29-րդ կետի գ) ենթակետով,ՀՀ կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021թ. մայիսի 10-ի <<Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին>> N 104-Լ հրամանով,հիմք ընդունելով <<ԻՆԵՔՍ>> ՍՊԸ-ի կողմից տրված հատակագիծը և համայնքային ծառայության առաջին կարգի մասնագետի առաջարկությունը՝

Որոշում եմ.

1.Թումանյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող Չկալով գյուղում գտնվող (ծած.06-089-0026-0007) բնակավայրերի բնակելի կառուցապատման տնամերձ հողամասին, մակերեսի չափը՝ 0,09778 հա տրամադրել նոր փոստային <<ՀՀ Լոռու մարզ,Թումանյան համայնք, գ.Չկալով, 4-րդ փողոց, 46/1 հողամաս>> հասցե:

2.Սույն որոշման 1-ին կետով տրամադրված հասցեն ենթակա է պետական գրանցման:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ

2022թ. սեպտեմբերի 16
ք.Թումանյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Թումանյան համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք. Թումանյան, (+374)98 04-80-46, tumanyan.city@mail.ru

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

16 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2022թվականի N 264-Ա

### ԹՈՒՄԱՆՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ, ԴՍԵՂ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 06-035-0057-0005 ԾԱԾԿԱԳՐԻ,6-ՐԴ ՓՈՂՈՑ ,ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆ 53 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՍԱՄՎԵԼ ՅՈՒՐԻԿԻ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՈՒՆԸ,ԲՆԱԿԵԼԻ ՏԱՆ ԲԱՑ ՊԱՏՇԳԱՄԲԸ ԵՎ ՊԱՐԻՍՊՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով,«Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածով, «Անշարժ գույքի հարկով հարկման նպատակով անշարժ գույքի շուկայական արժեքին մոտարկված կադաստրային գնահատման կարգը սահմանելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 1023-Նորոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006 թվականի թիվ 912-Ն որոշմամբ հաստատված կարգով, ՀՀ կառավարության 05,01,2022 թվականի թիվ 14-Ն որոշմամբ, հիմք ընդունելով, որ Սամվել Յուրիկի Սարգսյանի և Քրիստինե Մանվելի Ստեփանյանի կողմից կառուցված ինքնակամ բնակելի տան պատշգամբը,բնակելի տունը և պարիսպները չեն գտնվում ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, չի խախտում այլ անձանց իրավունքները, օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չէ ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում,կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք, հաշվի առնելով համապատասխան որակավորում ունեցող <<ՏՍ-ՌԻԵԼԹԻ>> ՍՊԸ-ի կողմից չափագրված բաց պատշգամբի,բնակելի տան, պարիսպի հատակագծերը, հաշվառման տվյալների մուտքագրման տեղեկանքը, չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝ 2022TBMFG4 և քաղաքացի Սամվել Յուրիկի Սարգսյանի դիմումը՝

Որոշում եմ.

1. Հաշվի առնելով չափագրման տվյալների մուտքագրման ծածկագիրը՝2022TBMFG4, Օրինականացնել Սամվել Յուրիկի Սարգսյանին և Քրիստինե Մանվելի Ստեփանյանին սեփականության իրավունքով պատկանող Թումանյան համայնքի

Դսեղ գյուղում,6-րդ փողոց 53 հասցեում գտնվող 06-035-0057-0005 կադաստրային ծածկագրով հողամասում ինքնակամ կառուցված, այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը չխախտող, քաղաքացիների կյանքին ու առողջությանը վտանգ չսպառնող, ինժեներատրանսպորտային օբյեկտների սպասարկման կամ անվտանգության գոտիներում չգտնվող, առանց քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով կառուցված, հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող և ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում չընդգրկված 14.80քմ արտաքին մակերեսով բնակելի տան բաց պատշգամբը, 34.20 քմ արտաքին մակերեսով բանկելի տունը,6.10քմ պարիսպը, 1.70 քմ պարիսպը,ինքնակամ ձևափոխված 2 պատուհանը:

2. Սամվել Յուրիկի Սարգսյանին՝համայնքապետարանի 900265002528 հաշվեհամարին ինքնակամ կառուցված շինությունների օրինականացման համար վճարել 43688.4 ՀՀ դրամ, որից բնակելի տան բաց պատգամբի օրինականացման համար 10996,4 ՀՀ դրամ, բնակելի տան օրինականացման համար 25410.6 ՀՀ դրամ.պարիսպի օրինականացման համար 4532.3 ՀՀդրամ և պարիսպի օրինականացման համար 1263,1 ՀՀ դրամ,ինքնակամ ձևափոխված 2 պատուհանի համար 1486 ՀՀ դրամ:

3. Վերջիններիս վճարման անդորրագիրը հանդիսանում է սույն որոշման անբաժանելի մասը:

4. Սույն որոշումից բխող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի կողմից:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման օրվան հաջորդող օրից:

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝** **ՍՈՒՐԵՆ ԹՈՒՄԱՆՅԱՆ**

2022 թ. սեպտեմբերի 16
ք.Թումանյան